

ՄԱՀԱԳՐՈՒԹԻՒՆ

ԼԵՒՈՆ ՀԱՆՎԵՐԴԵԱՆ
(1924-2003)



Ծանր, երկարատև հիւանդությունից յետոյ, 2003 Փետրուարի 6-ին Նրեւանում, այս աշխարհին հրաժեշտ տուեց բացառիկ բեղմնաւոր գործունէութեամբ անուանի մի մտաւորական, որի անունն է Լեւոն Հախվերդեան: Ըուրջ վեց տասնամեակ մա մեծ նուիրումով ծառայեց հայ գրականութեանը եւ մշակոյթին՝ իր ետեւից թողնելով մի պատուական անուն: Իր մտաւոր հարուստ ու հիմնաւոր իմացութիւնը մա ծառայեցրել է գրական, գիտական, լեզուա-մշակութային, մա եւ կենցաղային քննադատներում հարագատ ժողովրդին յուգող հարցերի հանրագոտ յուծմանը, անհաշտ պայքար մղելով անկիրք, գորշ, մակերեսային գրականութեան եւ արուեստի ջատագովների դմ: Նա իր ասելիքն ու անելիքը կատարել է անկեղծ հատատով, գիտական բարեխղճութեամբ, պատախանատութեան գգացումով: Նա անառարկելի հեղինակութիւն էր հայ գրական եւ մշակութային կեանքում:

Գրականագիտութիւն, թատերագիտութիւն, թարգմանութիւն, մանկավարժութիւն, հրապարակագրութիւն - սրանք եւ եղել մրա գործունէութեան ասպարէզները. որոնցում մրա աշխատանքը գնահատուել է՝ թանախրութեան դուտոր (1967), պլուֆետոր (1987), արուեստի վաստակաւոր գործիչ, (1972), ակադեմիկոս (1996), ՀՀ Պետական (1983), Հայաստանի Գրողների Միութեան Միքայէ Նալբանդեանի անուան (1988) մրցանակների դափնեկիր, Հայաստանի թատերական Գործիչների Միութեան Արտաւագ (1999), Թէքեան Մշակութային Միութեան դափնեկիր պատկառելի տիտղոսներով:

Լեւոն Յովհաննէսի Հախվերդեանը ծնուել է 1924, Դեկտեմբերի 26ին, Դարաքիլիսայում (այժմ՝ Վանաձոր): Մովորել է Նրեւանի Խաչատուր Արովեանի Անուան Դպրոցում: Եղել է Նրեւանի մորաբաց Թատերական Ինստիտուտի Թատերական Ֆակուլտետի առաջին շրջանաւարտներից (1944-49): Դեռես ուսանողական տարիներից Հախվերդեանն արդէն հրապարակի վրայ էր՝ գեւուցումներ ինստիտուտում, գրական-թատերական ատուլիսներում, ներկայացումների քննարկումներում, մեծարման երեկոներում, ամէնուրեք:

Հախվերդեանի առաջին յօդուածը՝ մուիրուած Լեւնիականի (այժմ Գիւմրի) Պետական Թատրոնում Նայիրի Չարեանի *Արա Գեղեցիկ* պիէսի բեմադրութեանը, լոյս է տեսել 1946ին, *Գրական Թերթ*ում: Այստեղ է մր ծեսարուել է մրա հրապարակախօսական խառնուածքը՝ 1949-1953ին աշխատելով որպէս, քննադատական բաժնի վարիչ: Միշտ օրուայ հոգներով ապրող մտաւորականը՝ գրեց *Մեր Օրերի Հայ Դրամատուրգիան (1945-55)* թեկնածուական դիսերտացիան (հրտ. 1956): 1953-55 աշխատելով Հայաստանի Պետական

Հրատարակչությունում որպես խմբագիր, նա թարգմանական գրականությունը հարստացրեց ընտիր լեզուով կատարած թարգմանություններով՝ Ն. Կունի *Հին Յունական Լեզուներն Ու Մոսսպեղները*, որը երկու հրատարակություն է ունեցել: Նրան են պատկանում Եւրիի Եուզովսկու *Դարն Ու Կերպարը* (1975), Կոկլեն Աւագի *Դերասանի Արուեստը* (1978) թատերագիտական եւ այլ գործերի մի շարք թարգմանություններ:

Միշտ ամհանգիստ ու որոնող Հախվերդեանն 1955-59 տեսնում ենք նորաստեղծ *Սովետական Արուեստ* ամսագրի խմբագրությունում, որպես պատասխանատու քարտուղար: Մեկական յոթուածներից բացի, նա կազմակերպել է օտար հեղինակների յոթուածների ու կարծիքների հրատարակությունը հայկական արուեստների ու նրանց դէմքերի մասին: Այս շրջանում էր, որ նա ուսումնասիրութեան միտք է դարձրել *Սուրեն Զոյարեանի Արուեստը* (1959) թեման:

ՀՀ Գիտությունների Ակադեմիայի Արուեստների Պատմութեան Ու Տեսութեան Մեկտորը իբրեւ Արուեստի Ինստիտուտ վերակազմաւորուելուց յետոյ, Հախվերդեանը եղել է նրա առաջին գիտնականներից մէկը, դառնալով Թատրոնի եւ Կինոյի Բաժնի վարիչ (1965ից), իսկ 1987ից մինչեւ կեանքի վերջը՝ Ինստիտուտի տնօրէն:

Արուեստի Ինստիտուտում ձեռնարկած ուսումնասիրությունների մէջ խորացաւ Հախվերդեանի գիտահետազոտական աշխատությունների կշիռը: Թատերական հարցերից բացի, նա որոշ անդրադարձ կատարեց նաեւ կինոյի եւ ճարտարապետութեան (շատ ոգեւորուած էր Ռաֆայէլ Իսրայէլեանի աշխատանքներով) ասպարէզներում: Այդ շրջանում էր, որ նա իր աշխատակից ընկերների հետ պատրաստեց *Հայ Սովետական Թատրոնի Պատմութիւն* մեծարժէք գիտական ուսումնասիրությունը (1967): Այդ գրքի համար նրա գրած *Դերասանական Արուեստ (1917-1962)* բաժինը աշխատութեան մէկ-երրորդից աւելին է: Նա ծաւալուն ու թեթեւակի բնութագրումներով տուել է ընդգրկուած ժամանակաշրջանի շուրջ ութ տասնեակ դերասանի ստեղծագործութեան վերլուծությունը: Արժէր, որ այդ աշխատութիւնն առանձին հրատարակութիւն ունենար: Սիրում էր աշխատել դասական, մեղմ երաժշտութեան տակ:

Հախվերդեանի բանասիրական պրպտումների մէջ ամենանշանակալիցը դարձաւ *Թումանեանի Աշխարհը* դոկտորական դիսերտացիան (1964, տպագրուել է 1966ին), իսկ թատերագիտութեան մէջ՝ *Հայ Թատրոնի Պատմութիւն (1901-1920)* հանգամանալից ուսումնասիրությունը (1980), որն արժանացաւ Հայաստանի Պետական Մրցանակի (1983):

1969-76 Հախվերդեանը հասարակական հնչեղութիւն ունեցող մի մեծ ծառայութիւն մատուցեց հայ գրական-մշակութային կեանքին: Նա Յովհաննէս Թումանեանի Օննդեան 100ամեակի Տօնակատարութեան Հանրապետական Յանձնաժողովի քարտուղարն էր, որի ուսերին էր ծանրացած Թումանեանի մի շարք գործերի հրատարակությունը բնագրով եւ թարգմանություններով, տարբեր վայրերից եկած-հրաւիրուած գրական-թարգմանչական գործիչների աւօրեայի կազմակերպումը, ամբողջ Թումանեանական Տարին միջոցառում-

ներով նշելու բալլ գործը, թէ իբրեւ զեկուցող եւ թէ իբրեւ կազմակերպիչ: Ի վերջոյ հրատարակելով յոբելեանական տարուայ անցուդարձի տարեգրութիւնը (1972): Այս շրջանում (1969) նա հրատարակեց *Թումանեանի Կեանքը* եւ *Թումանեան* գիրքերը՝ հայերէն, ռուսերէն, անգլերէն, գերմաներէն եւ ֆրանսերէն լեզուներով:

Ոչ պակաս արդիւնատէտ էր նրա աշխատանքը նաեւ Աւետիք Իսահակեանի ծննդեան 100 (1975) եւ Գաբրիէլ Սունդուկեանի ծննդեան 150 (1976, մէկ տարի ուշացումով) ամեակներին նուիրուած յոբելեանական հանդէսների ու միջոցառումների կազմակերպման գործում: Այդ առթիւ նա տպագրեց *Իսահակեանի Կեանքն Ու Գործը* (Իր Վկայութիւններով Ու Բանասիրական Յանդիմաններով) գիրքը հայերէն (1974) եւ ռուսերէն (Մոսկուա, 1975):

Թատերական արուեստին նուիրուած Հախվերդեանի հրատարակութիւններն ու թարգմանութիւնները խթան են հանդիսացել արուեստի այդ ժանրի զարգացմանը: Գաբրիէլ Սունդուկեանի Անուան Պետական Ակադեմական Թատրոնի 50ամեակի առթիւ (1972), նա գրեց եւ հրատարակեց մի գործիչ թատրոնի անցած ուղի մասին՝ հայերէն, ռուսերէն, անգլերէն եւ ֆրանսերէն:

Բեմադրիչ Վարդան Աճեմեանի հետ նա գրեց չարեմեցեան բեմաներով *Դէպի Այսպազան* պիւեքը, որը 1960ին բեմադրուեց Սունդուկեանի անուան թատրոնում Աճեմեանի կողմից: Հախվերդեանի թարգմանութեամբ 1956-1979 նոյն թատրոնում բեմադրուել են Ա. Մովսէսի *Մի Խուլ Նըքանցքում*, Ա. Ջակի եւ Ա. Կուզնեցովի *Երկու Գոյն*, Վ. Դեմարի *Յիշիր Վաղուայ Օրդ*, Վ. Խարդուի եւ Է. Մորոյի *Մաղան Սան-ժէն*, Մարսէլ Պանիլի *Տոպագ*, Ա. Աբդուլինի *Տասներեքերորդը* պիւեսները:

Հախվերդեանը մի որոշ ժամանակ հայ թատրոնի պատմութիւն է դասաւանդել Թատրոնի Եւ Կինոարուեստի Պետական Ինստիտուտում՝ ղեկավարելով թատերագիտական կուրս: Հայ բեմի մեծերի թողած գրական ու բեմական գործունէութեանը վերաբերող նիւթերին մօտիկից առնչուելու նպատակով, նա ուսանողներին յաճախ բերում էր Գրականութեան Եւ Արուեստի Թանգարան տեղում ծանօթանալու այդ լուռ, բայց խօսում վկաների հետ:

Իբրեւ մայրենի լեզուի անադարտ կիրառմանը նախանձախնդիր անձնատրութիւն, նա, ինչպէս մամուլում, այնպէս էլ հեռուստատեսութեամբ բազմիցս ելոյթներ է ունեցել մեր լեզուի յստակ ու տեղին գործածութեան հարցերի շուրջ, ամէնօրեայ յուզող հարցեր, որոնք յետագայում նա ամփոփել է *Չրոյցներ Հայերէնի Մասին* (1982) եւ *Չրոյցներ Լեզուի Մասին* (1986, 1993) գրքերում:

1981ին, Լիբանանի Քաղաքացիական Պատերազմի շրջանում, Բէյրութի Հայկազեան Գողէնի (այժմ Համալսարան) կողմից Հախվերդեանը հրաւիրուել է մի շարք դասախօսութիւններ կարդալու լեզուի, գրականութեան, մշակոյթի մասին՝ բարձրացնելով մեր հայրենակիցների ոգու տոկոսնութիւնն ու ստեղծագործելու ակտիւութիւնը: Այս շրջանի նրա գրական հունձքն է հանդիսացել *Պարոյրը* խոհագրութիւնը (1981 Բէյրութ), որն արժանացել է Հայաստանի Գրողների Միութեան Միքայէլ Նալբանդեան մրցանակին (1988): Նա 1997

Յունուար-Փետրուար ամիսներին դարձնալ դասախօսություններ է կարդացել Հայկազեան Համալսարանում:

Հախվերդեանը եղել է աշխարհի մի շարք հայկական համայնքներում և ամենուրեք շփուել ու մտերմական կապերի մեջ է մտել տեղական գրական-մշակութային գործիչների հետ, գրել նրանց մասին, քարձրացրել նրանց՝ հայապահպանության համար չափազանց կարևոր դերը մեր ժամանակներում: Նա այն սակաւաթիւ գործիչներից էր, որ մասունքներ էր բերում սփիւռքից և պահպանութեան յանձնում Գրականութեան Եւ Արուեստի Թանգարանին:

Բեղմնատուր մտատրականի գրչի արդիւնք են նաեւ *Երկեր Եւ Կերպարներ* (1964), *Դերեր Եւ Դերասաններ* (1977), *Բեմադրիչներ Եւ Բեմադրութիւններ* (1983), *Մենք և Մեր Ժամանակը* (1997 Բէյրութ), *Մենք և Մեր Օրերը* (2000) յօդուածների ժողովածուները, *Թատերագիտական Բառարան* (1986), *Սոսորումներ* (1984), *Յովհաննէս Արեւեան* (1990), *Վարպետը* (Ա. Իսահակեանի մասին 1990) գրքերը, *Թումանեանը Եւ Հայոց Պատմական Շակատագիրը* ժողովածուն իր առաջադրանով ու ծանօթագրութիւններով (2000): Լեւոն Հախվերդեանն իր մարտնչող գրական-թատերական գործունէութեան ճանապարհին իրեն դրսևորել է իբրեւ իր իսկ բառերով ասած՝ շիտակ մարդ: Իր շրջապատում չի եղել շնորհալի մէկը, որին չընդառաջի, չօգնի, չսքախուսի իր ասպարէզը գտնելու համար:

Նա այս կեանքից հեռացաւ զգայուն մարդու, սրտամօտ ընկերոջ, ընտանիքին նուիրուած, գիտութեան ու գրականութեան մէջ լսուն ու առաջատորը գնահատուած մարդու բոլոր լատագոյն յատկութիւններն իր սրտում անքեղած:

ԲԱՆՏԻԱՐ ՅՈՎԱԿԻՄԵԱՆ

ՊՕՐՈՍ ԽԱՉԱՏՐԵԱՆ (1929-2003)

Հայաստանի Գիտութիւնների Ազգային Ակադեմիայի Մանուկ Աբեղեանի Անուան Գրականութեան Ինստիտուտի առաջատար գիտաշխատող, բանասիրական գիտութիւնների դոկտոր, պրոֆեսոր Պօրոս Մկրտչի Խաչատրեանը ծնուել է 1929ին, Ախալցխայի շրջանի Ծղալթբիլա գիւղում: 1947ին աւարտելով տեղի միջնակարգ դպրոցը, նա ընդունուել է Երեւանի Խաչատուր Աբովեանի Անուան Մանկավարժական Ինստիտուտ, որն աւարտել է 1951ին և վերադարձել հայրենի գիւղ՝ ուսուցչութեան: 1960ին ընդունուել է Հայաստանի Գիտութիւնների Ակադեմիայի Մանուկ Աբեղեանի Անուան Գրականութեան Ինստիտուտի ասպիրանտուրան՝ «Հայ Հին Եւ Միջնադարեան Գրականութիւն» մասնագիտութեամբ: Նրա «Հայ Միջնադարեան Ողբերը» քննաձեռնական ատենախօսութիւնն առանձին գրքով լոյս է տեսել 1969ին: Այնուհետեւ նրա գիտական հետաքրքրութիւնները կենտրոնացել են Գրիգոր Նարեկացու ստեղծագործութեան շուրջ, որի արդիւնքում, երկար տա-



րինքերի տքմաջան հետազոտություններից յետոյ, մեծավաստակ գիտնական Արշալույս Ղազինեանի հեղինակակցութեամբ լոյս է տեսել Գրիգոր Նարեկացու *Մատենան Ողբերգութեան* պոեմի գիտաքննական քննադիրը (1985), որի համար ուսումնասիրողներն արժանացել են Ակադեմիայի Մեսրոպ Մաշտոցի անուան մրցանակի:

Պօղոս Խաչատրեանի հեղինակութեամբ հրապարակուել են նաեւ *Նարեկի Միջնադարեան Լուծմունքը* (1990) եւ *Գրիգոր Նարեկացին եւ Հայ Միջնադարը* (1996) գրքերը: 1994ին Խաչատրեանի աշխատասիրութեամբ լոյս է տեսել *Մովսէս Խորենացի. Աստղծներ, Խոհներ, Բնութագրումներ* գործը՝ գրաբար հատուածների հանդիպադիր արեւելահայերէն փոխադրութեամբ, առաջաբանով եւ ծանօթագրութիւններով, իսկ 2001ին՝ *Գանձարան Հայ Հին Բանաստեղծութեան* ստուարածաւալ ժողովածուն (մասնակի աշխատակցութեամբ Վարդան Դեղիկեանի)՝ առաջաբանով, հեղինակների կենսագրականներով, հարուստ ծանօթագրութիւններով եւ քառարանով:

Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգէն Ա.ի առաջարկով անխոնջ գիտնականը գրաբարից արեւելահայերէնի է վերածել *Սուրբ Գրքի* որոշ հատուածներ՝ «Երեմիայի Մարգարէութիւն»ը, «Եսայա Մարգարէութիւն»ը, «Երեմիայի Ողբ»ը եւ «Բարութի Թուղթ»ը, որոնք *Սուրբ Գրքի* հետ միասին ունեցել են երեք հրատարակութիւն՝ 1994ից սկսած: Խաչատրեանն արեւելահայերէն է քարգմանել նաեւ Շահամիրեանների *Որոգայթ Փառաց* աշխատութեան երկու գրքերը, որոնցից առաջինը լոյս է տեսել 1991ին, երկրորդը, ՀՀ Սահմանադրական Դատարանի պատուէրով, 2002ին:

Բացի գիտական գործունէութիւնից՝ Պօղոս Խաչատրեանը զբաղուել է նաեւ մանկավարժութեամբ: Շահագործուած լինելով մանուկ սերնդի հայեցի կրթութեան հարցով՝ նա կազմել է ճող դասարանի *Գրականութիւն* դասագիրքը (Ալբերտ Շարուրեանի եւ Ռ. Դալլաքեանի հեղինակակցութեամբ), որն ունեցել է աւելի քան 15 հրատարակութիւն, ինչպէս նաեւ 9րդ դասարանի *Քրեստոմատիա* ձեռնարկը: Պօղոս Խաչատրեանը դասախօսել է Երեւանի Պետական Համալսարանի Հայկական Բանասիրական Ֆակուլտետում (1983-1995), իսկ 1995ից մինչեւ կեանքի վերջը՝ Սեւանի Վազգէնեան Հոգեւոր Դպրամուցում եւ Ս. Էջմիածնի Գեորգեան Հոգեւոր Ընծարամու՝ վերջիններում դասաւանդելով հայ հին գրականութեան պատմութիւն եւ հայ եկեղեցական մատենագրութիւն առարկաները:

Խաչատրեանը մահացել է 21 Յուլիս 2003ին:

ԱՆԱՀԻՏ ՎԱՐԴԱՆԵԱՆ

ՌՈԶԱ ԳՐԻԳՈՐԵԱՆ

(1931-2003)

Բանասիրական գիտությունների դոկտոր, քանագետ Ռոզա Հայրապետի Գրիգորեանը ծնուել է 1931ի Յունուարի 25ին, Նոր Բայազետում (այժմ՝ Գաւառ): Աւարտել է Երեւանի Պետական Համալսարանի Բանասիրական Ֆա-

կուլտետի Հայոց Լեզուի և Գրականության Բաժինը 1953ին, և ընդունել Մամուլ Աբեղեանի Անուան Գրականության Ինստիտուտի ասպիրանտուրան՝ «Յունա-Հայկական Գրական Կապեր» մասնագիտությամբ, նշանադր յունարան պոէֆեսոր Համազասպ Համբարձումեանի գիտական ղեկավարությամբ: 1980ին հրատարակել է Համբարձումեանի կենսամատենագիտությունը, 1988ին վերահրատարակության է պատրաստել Հոմերոսի *Ոդիսականը* Համբարձումեանի թարգմանությամբ: 1964ին պաշտպանել է «Հոմերոսը և Հայ Գրականությունը» թեմայով քեկնածուական թեզ և շարունակել իր ուսումնասիրությունները յունա-հայկական գրական կապերի ասպարեզում:

1960ից մինչև կեսանքի վերջը Գրիգորեանն աշխատել է ՀՀ Գիտությունների Ազգային Ակադեմիայի Հնագիտության և Ազգագրության Ինստիտուտում, մախ՝ կրտսեր, ապա՝ ասագ և առաջատար գիտաշխատողի պաշտոններով: Ջրադուել է բանահաւաքական, բանագիտական աշխատանքներով, որոնք արգասաւորուել են մի շարք ժողովածուների հրատարակմամբ՝ *Հայ Ժողովրդական Օրորոցային և Մանկական Երգեր* (1970), *Հայ Ժողովրդական Հեքիաթներ*, հատոր VIII (1977), *Գեղարքունիք* (1983), *Մանկապատում* (1991), *Սասնայ Ծռեր*. 7 *Նորայայտ Պատումներ* (2000):

1996ին Գրիգորեանը պաշտպանել է դոկտորական ատենախօսություն՝ «Հայ Մանկական Բանահիւստիւթիւնը» թեմայով, որը որպէս առանձին մենագրութիւն տպագրուել է 2002ին՝ *Հայ Մանկական Բանահիւստիւթիւն (Ժողովրդական Օրորոցային և Մանկական Երգեր)* վերնագրով: Գրիգորեանը հայ մանկական բանահիւստեան մեթոքեայ միակ և լաւագոյն հետազօտողն էր:

Նա հեղինակ է բազմաթիւ բանահիւսական և բանագիտական յօդւածների: Ջգալի աշխատանք է կատարել հայ ժողովրդական խաղիկների գիտական համահաւաքի, մոտիւային համարարքառի կազմման, ինչպէս նաեւ Հնագիտութեան և Ազգագրութեան Ինստիտուտի բանահիւսական արխիւի մշակման գործում:

Ռօգա Գրիգորեանը մահացել է 2003ի Օգոստոսի 13ին, Երեւանում:

ԵՐԱՆՈՒՀԻ ՄՆԼԻԶ-ՄՈՒՐԱԳԵԱՆ

ԳԵՈՐԳ ԱՐԱՋԵԱՆ (1920–2003)

Թատերագետ, բանասիրական գիտությունների քեկնածու Գեորգ Համբարձումի Արաջեանը ծնուել է Գուգարաց աշխարհի Ընող գիւղում: Պատանեկութիւնն ու երիտասարդութիւնը անցել են Ըիրակի դաշտավայրի Ըիրակ գիւղում, ապա՝ Գիւմրիում: Երկրորդ Աշխարհամարտից առաջ որպէս դերասան աշխատել է Գիւմրիի Տիկնիկային Թատրոնում: Իբրեւ ալլախոհ՝ 20 տարեկանում դարձել է ստալինեան բռնակալութեան զոհերից մէկը՝ ենթարկուելով աքսորի: Երկրորդ Համաշխարհային Պատերազմի տա-



րիներին կամաւոր մեկնել է ռազմաճակատ: Պատերազմից յետոյ վերադարձել է Գիւմրի, որպէս դերասան աշխատել տեղի Դրամատիկական թատրոնում: Այստեղ նրա կատարած կարեւոր դերերն են Ֆերդինանդը (Ֆրիդրիխ Շիլլերի *Մեր եւ Խարդաւանը*), Օթարեանը (Ալեքսանդր Շիրվանզադէի *Պատուի Համար*) եւ Գագիկ թագաւորը (Դերենիկ Դեմիրճեանի *Երկիր Հայրենի*): Թողնելով բեմը՝ նուիրուել է թատերագիտութեանը: 1956ին կնոջ՝ դերասանուհի, Հայաստանի ժողովրդական արտիստուհի Վարդուհի Վարդերեսեանի հետ հաստատուել է Երեւանում: Այստեղ երկու տասնամեակ ղեկավարել է Հայաստանի Հեռուստատեսութեան Եւ Ռադիոյի Պետական Կոմիտէի Գլխաւոր Խմբագրութիւնը: Հեղինակ է երկու տասնեակից աւելի մեծ եւ փոքր գրքերի, բազմաթիւ յօդուածների: Առանձին գրքերով լոյս տեսած աշխատութիւններից յիշարժան են *Սուրբն Սուրբենան* (1959), *Իսահակ Ալիխանեան* (1967), *Գուրգէն Յակոբեան* (19983), *Լեւոն Զոհրաբեան* (1984), *Արտիստը Ինչպէս Տեսայ* (Վահրամ Փափագեանի մասին, 1986), *Թանձրացումներ* (1988), *Աղասի Ալայեան Եւ Հրանուշ Բարաջանեան* (1989), *Գիւմրիի Թատրոնի Մարդիկ* (1989), *Երկու Դիմանկար. Ասիա Բերդյեան, Արամ Ռշտունի* (1990), *Թատերական Անթրաքներ* (1996), *Սարքինա Գրիգորեան* (2000), *Աւետիք Իսահակեանը Եւ Հայոց Ողբերգութիւնը* (2001): Կեանքի վերջին տարիներին եղել է ՀՀ Ազգային Ակադեմիայի Ցեղասպանութեան Թանգարան-Ինստիտուտի աւագ գիտաշխատող: Երկու անգամ արժանացել է Հայաստանի Ժողովրդական Միութեան առաջին մրցանակի, ինչպէս նաեւ ՀՀ արուեստի վաստակաւոր արտիստի կոչման:

Գեորգ Արաջեանը վախճանուեց 2003 Հոկտեմբերի 6ին, Երեւանում:

ՀԱՅԿԱԶ ԵՐԱՆՈՍԵԱՆ

ԼԵՕ ՀԱՄԱԼԵԱՆ (1920-2003)

Ականաւոր եւ քեղմնաւոր գրող, ուսուցիչ եւ խմբագիր Լեօ Համալեան ծնած է 1920ին: Ան աւարտած է Նիւ Եորքի Քոլմէյ Եւ Քոլումպիա Համալսարանները եւ անցած ուսուցչական ասպարէզի՝ իբրեւ գրելու եւ գրականութեան դասախօս:

Դուկտ. Համալեան սիրուած դասախօս մըն էր: Ան գրականութիւն դասաւանդեց Համպտրիկի, Փարիզի, Նիւ Եորքի, Քոլումպիա, Թենըսիի համալսարաններուն, ինչպէս նաեւ California Institute Of The Artsի մէջ: Այդուհանդերձ իր ուսուցչական բնօրրանը եղաւ Նիւ Եորքի Սիթի Քոլէճը ուր դասաւանդեց 1955էն մինչեւ իր մահը: Հոն էր որ ան արժանացաւ մրցանակներու, ինչպէս՝ «Ականաւոր Ուսուցիչ»ի (1985), Ժառայեց իբրեւ Guidanceի տեսուչ (1964-66), ապա եղաւ տնօրէնը Creative Writing Graduate programի (1972-75): Ան գործեց իբրեւ տեսուչը



Academic Affairs՝ California Institute of Artsի մէջ, եղաւ խորհրդականը Մ. Նահանգներու Կրթական Բաժանմունքին:

Ան անդամ էր P.E.N.-ի Freedom to Write յանձնախումբին: Համալեան մաս կազմեց մաեւ շաբթ մը կարեւոր ամսագրերու խմբագրութեան, ինչպէս՝ *The Literary Review, Coloumbia*, եւ *Humerus*: Խմբագիրն էր *American Book Review*ին: 1958էն 1964 աշխատած է *Harper's Magazine*ի մէջ եւ համախմբագիրն էր *Artists Influence* երկամեային որ Ափրիկո-ամերիկեան արուեստին մոլորած երատարակութիւն մըն է:

Դամասկոսի ու Թեհրանի համալսարաններուն մէջ դաստանդման ընթացքին, Համալեան սկսաւ խորացնել իր ծանօթութիւնը հայ գրականութեան:

Ան հայ մշակոյթի երկարամեայ մշակ մըն էր, որ գործեց հայ անգլիատառ գրականութեան անդաստանին մէջ: Ան 1972էն մինչեւ 2003 խմբագիրն էր անգլիատառ *Ararat* գրական պարբերականին: Գրական եւ մշակութային այս եռամսեան թերեւս լաւագոյն ամբիոնը եղաւ որով Համալեան ի գործ դրաւ իր կախարդանքը: Պարբերականը՝ ՀԲԸՄի հովանիին տակ կը երատարակէ կայացած եւ մոր գրողներու երկեր, եւ կը ծառայէ իբրեւ ամերիկահայ համայնքի միակ գրական խօսակողը: Այսուհանդերձ, *Ararat*ի հռչակն ու ընթերցողներուն շրջանակը կ'անցնին հայ համայնքէն անդին: Համալեանի դերը մեծ եղաւ մաեւ ամերիկահայ մոր գրողներու ճանաչման եւ սատարումին մէջ: Ան 14 տարի ատենապետ Անահիտ Գրական Մրցանակի Յանձնախումբը, որ առնչուած է Հոլոքոսթի համալսարանի Հայկական Ամբիոնին:

Ան մեծ ազդեցութիւն ունեցաւ ամերիկահայ գրականութեան վրայ ոչ միայն իբրեւ գրող, քննադատ եւ ընտրանիներ կազմող, այլեւ մոր գրողներ հաւաքագրող եւ անոնց գրական զարգացման աջակցող: Իր ազնիւ եւ օգնող քննադատութիւնը իր շուրջ համախմբեց ժամանակակից գրողներու բարեկամական մեծ խումբ մը, որ գնահատողը հանդիսացաւ իր գրական գիտելիքներուն եւ կարողութիւններուն:

Իբրեւ գրող եւ խմբագիր Համալեան մեծ նպաստ ունեցաւ ամերիկահայ գիր ու գրականութեան: Ան համախմբագրեց ամերիկահայ գրականութեան ծաղկաքաղ մը՝ *Crossroads: Short fiction by Armenian American Writers* (1992) հատորը ուր տեղ գտան Լեւոնաբո Ալիշանի, Հերի Պարպայի, Շոն Պարսամեանի, Էնն Քալինի, Մայքըլ Քէյսիի, Ռիչըրտ Յակոբեանի, Բոպրթ Հիւսընի, Քարլ Գալիպեանի, Լորա Գալիպեանի, Մայքըլ Գրիգորեանի, Քեթրին Մանուկեանի, Փիթըր Նաճարեանի, Ռոպրթ Ներսէսեանի, Ուիլմ Սարոյեանի, Փիթըր Սուրեանի եւ Լեոն Սիլմէեանի պատմութեանը, խմբագրեց Սարոյեանի պատմութեանը՝ *Madness in the Family* (1988), ընդգրկեց հայ գրականութեան մտուշներ՝ լայն ընդգրկում ունեցող գրական ծաղկաքաղներու մէջ, ինչպէս՝ *New Writing from the Middle East* (1978), ուր արաբական, իսրայելեան, պարսկական եւ քրդական ժամանակակից հեղինակներու կողքին ներկայացուց հայ գրականութիւնը յանձինս Վախթանգ Անանեանի, Գուրգէն Մահարիի, Մերօ Խանգաղեանի, Հրանդ Մաթեոսեանի, Գեորգ Էմիի, Սիլվա

Կապուտիկեանի, Աւետիք Իսահակեանի, Պարոյր Սեւակի, Զահրատի, Անդրանիկ Շառուկեանի եւ Կարիկ Պասմաճեանի երկերում:

Ան գրեց հայերու մասին՝ գրականութեան թէ անձնական փորձառութեան դիտանկիւններէն՝ *As Others See Us: The Armenian Image in Literature* (1980), ուր ներկայացուց հայուն կեպարը՝ իբրեւ առեւտրական, գրականութեան մարդ, մարտիկ ու խորհրդական, արուեստագէտ ու սիրող, իմաստուն եւ աշխարհաքաղաքացի՝ հանելով զայն կարծրատիպէ (stereotype): Խմբագրեց Ուիլիըմ Սարոյեանի *The Man and the Writer Remembered* (1987) հատորը եւ քաղմաթիւ յօդուածներ հրատարակեց տարբեր ժողովածուներու մէջ, ինչպէս՝ Ռիչըրտ Յովհաննիսեանի՝ *New Perspectives on the Armenian Genocide*ը:

Հեղինակեց շարք մը գիրքեր, ինչպէս՝ *Burn After Reading* (1978), *D. H. Lawrence in Italy*, եւ համահեղինակեց *Grammar in Context* գիրքը: Առանձին թէ այլ խմբագիրներու հետ հրատարակեց վեց դասագիրքեր՝ վիպակներու, երեսակայական պատմութեան (fiction), ռուսական վիպակներու, եւ գրականութեան մասին, ինչպէս նաեւ՝ շարք մը ծաղկաքաղներ, ինչպէս՝ *The Existential Imagination*, *In Search Of Eden*, եւ *The Fourth World*: Ան հրատարակեց նաեւ երեսակայական պատմութեան ծաղկաքաղ մը՝ *The Outposts of Imagination*, ու համախմբագրեց *Eleven Modern Short Novels*, *The Naked I*, *The Radical Vision* գիրքերը, եւ կնոջական երկեր՝ *Solo* եւ *Ladies on The Loose*:

Համալեւան կատարած է նաեւ գրական-գրաքննադատական ուսումնասիրութիւններ՝ հայ եւ միջին արեւելեան:

Շուրջ 200 յօդուածներու՝ ու տարբեր միութեան գրախօսականներու հեղինակ Լէօ Համալեւան մահացաւ Նիւ Եորքի մէջ, 8 Նոյեմբեր 2003ին:

ԱՐԱՄ ԱՐՔՈՒՆ

ՄԻՇԷԼ ՎԱՆ ԷՍԲՐՈՒԿ

(1934-2003)

22 Նոյեմբերի 2003ին, Նոր Լուվէնում, 69 տարեկան հասակում, անսպասելիօրէն իր մահկանացուն կնքեց մեր ժամանակների նշանաւոր արեւելագէտներից մէկը՝ հայագէտ, վրացագէտ եւ քրիստոնեայ Արեւելքի մատենագրութիւնների հմուտ մեկնաբան պրոֆ. Միշէլ Վան Էսբրուկը:

Վան Էսբրուկը ծնունդ է 17 Յունիսի 1934ին, Բելգիայի Մալին քաղաքում: 1951ին ընդունուել է Բրիստլի Սէն Միշէլ Քոլէջ: Այնուհետեւ մէկ տարի սովորել է Բրիստլի Սէն Լուիս Իրաւաբանական Ֆակուլտետում, որից յետոյ, 1953-55ին անցել է Յիսուսեան Վանական Կարգի շարքերը: 1959ին մա պետական քննութիւն է յանձնել եւ դասական բանասիրութեան մասնագէտի վկայական ստացել Բելգիայում: Այնուհետեւ երեք տարի, Լիբանանի Սէն-Ալբեր Բաժանապապետական Ինստիտուտում պատրաստել է փիլիսոփայութեան աստիճանի առեւտրախօսութիւն «Պրոհայրեսիսը Արիստո-



տելի Եւ Յոյն Ճարտասանների Մօտ» թեմայով: Մէկ տարրուայ զինուորական ծառայութիւնից յետոյ, մա դասաւանդել է նոյն ուսումնական հաստատութեան մէջ: 1962ին Վան Էսքրուկը հրաւիրուել է պաշտօնավարելու Բրիտէի Բոլանդիստների Վանական Միութեան գրադարանում: Այդ ժամանակ, իբրեւ ազատ ունկնդիր, մա թոյլտուութիւն է ստացել Լուվէնի Համալսարանում հետեւել պրոֆ. Ժերար Գարիտի հայկական եւ վրացական բանասիրութեան դասախօսութիւններին: Վան Էսքրուկը, գիտակցելով վաղ վարքագրական մատենագրութեան ուսումնասիրութեան ողջ բարդութիւնը, հասկանում է, որ երկու արեւելաքրիստոնէական լեզուների իմացութիւնը դեռեւս բաւարար չէ այդ աշխատանքներին լծուելու համար: Նրան թոյլատրուել է Բէյրութի Մէլ-Շոզէֆ Համալսարանում ուսանել արաբերէն եւ ասորերէն, սակայն 1964ին ետ է կանչուել Լուվէն, շարունակելու աստուածաբանական կրթութիւնը:

1966ին Վան Էսքրուկը ձեռնամուխ է եղել Լուվէնի Համալսարանում արեւելեան բանասիրութեան եւ պատմութեան գծով դոկտորական ատենախօսութեան պատրաստութեանը: 1970ին աւարտել է աստուածաբանական կրթութիւնը եւ ձեռնադրուել քահանայ: 1975ին պաշտպանել է իր ատենախօսութիւնը: Նոյն թուականից սկսած մասնակցել է Խորհրդային Միութեան տարածքում բազմաթիւ գիտական ծրագրերի, որոնք իրականացւում էին Մոսկուայում, Լենինգրատում, Թբիլիսիում եւ Երեւանում: 1982ին այդէն ճանաչում ունեցող գիտնականը հրաւիրուել է Հռոմի Քահանայապետական Արեւելագիտութեան Ինստիտուտ, դասաւանդելու հայերէն եւ վրացերէն: 1985ին մէկ տարով փոխարինել է պրոֆ. Ժան-Պիեռ Մահէիմ՝ Փարիզի Կաթողիկէ Համալսարանի Հայագիտութեան Ամբիոնում: 1987ին ընտրուել է Միւնխէնի Լիդուիգ-Մարսիալիան Համալսարանի Քրիստոնէայ Արեւելք Ամբիոնի վարիչ եւ պաշտօնավարել մինչեւ 31 Յուլիսի 1999ը:

Դասախօսական աշխատանքին զուգահեռ Վան Էսքրուկը մեծ ջանասիրութեամբ նուիրուել է յիշատակուած արեւելեան լեզուներով վաղ քրիստոնէական բնագրերի յայտնագործման եւ հրապարակման աշխատանքին, միաժամանակ ձեռնամուխ լինելով այդ հազուագիւտ փշրանքների ստեղծման պատմական միջավայրը ներկայացնելու եւ բնագրագիտական նորք հետազօտութիւններ գրելու գործին:

Հայագիտութեան ոսկէ ֆոնդի մաս են կազմում երջանկայիշատակ հեղինակի հետազօտութիւնները Սողոմոն Մաքեմացու եւ Մշոյ Ճաղընտրի, Ագաթանգեղոսի Պատմութեան, Ս. Թադէոսի եւ Ս. Բարքոբիմէոսի պաշտամունքի, Եզնիկ Կողբացու Եղծ Աղանդոցի, հայկական ձեռագրական կրկնագրերի վերաբերեալ: Հայագիտական այդ աշխատութիւնները լոյս են տեսել ֆրանսերէն, անգլերէն, գերմաներէն ու հայերէն (երբեմն՝ թարգմանաբար)՝ *Analecta Bollandiana, Annuarium Historiae Conciliorum, Le Muséon, Oriens Christianus* եւ այլ հանդէսներում, տարբեր գիտաժողովների ընթացքում նեկայացուած գեկուցումների առանձին հաւաքածուներում ինչպէս նաեւ այլ մասնագիտական ժողովածուներում: Հայագիտական պարբերական հրատարակութիւններից Վան Էսքրուկի յօդուածները իրենց էջերում տպագրել են *Revue des Études*

Arméniennes, Բանբեր Մատենադարանի, Հանդես Ամսօրեայ, Պատմաքանասիրական Հանդես, Հասկ Հայագիտական Տարեգիրք եւ *Էջմիածին* հանդեսները:

Վերջին տարիներին մա առանձնապես մեծ հետաքրքրություն էր ցուցաբերում Հայոց Եկեղեցու վաղ շրջանի պատմության, ծեսի եւ իրաւունքի խնդիրների նկատմամբ: Այդ նպատակով կատարուած պրպտումների արդիւնքում Վան Էսքրուկը նոր մեկնաբանութիւններ առաջարկեց Ե.-Ը. դարերի հայ-քիւզանդական եկեղեցական փոխարարքութիւնների հետազօտութեան եւ վաղ հայկական մատենագրութեան մի շարք երկերի ուսումնասիրութեան, թուագրութեան քնազաւառում:

Վան Էսքրուկը անդամ էր Գերմանիայի Գիտութիւնների Ակադեմիայի Հայրաբանութեան Յանձնաժողովին, ընտրուել էր Վրաստանի Գիտութիւնների Ակադեմիայի արտասահմանեան անդամ: Դեկտեմբեր 1998ին Թբիլիսիի Համալսարանի Վրացագիտութեան Ամբիոնը վրացագիտութեան քնազաւառում ունեցած ձեռքբերումների համար նրան արժանացրեց Մարի-Ֆելիսիտ Բրոսէի Անուան Մրցանակի:

ԱԶԱՏ ԲՈԶՈՅԵԱՆ

ՏԷՐ ՄԵՍՐՈՊ ԱՐՔ. ԱՇՃԵԱՆ

(1941-2003)

Կրօնագէտ աստուածաբան, Հայ Եկեղեցոյ ծիսակարգի հմուտ գիտակ, պատմաբան, արձակագիր, հրապարակագիր, մշակութային ու հասարակական գործիչ Հայր Մեսրոպ Աշճեան (աւագանի անունով Հրայր), ծնած է Պէյրութ, 3 Յունուար 1941ին: Նախակրթութիւնը ստացած է տեղի Ս. Նշան Ազգային Վարժարանը: 1957ին ընդունուած է Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Դպրեվանքը: 1961ին ձեռնադրուած է կուսակրօն քահանայ, 1963ին ստացած է վարդապետական աստիճան, (վերանումուելով Տէր Մեսրոպ՝ ի յիշատակ Մեսրոպ Մաշտոցի ծննդեան 1600ամեակին), 1977ին՝ եպիսկոպոսական աստիճան, իսկ 1983ին՝ արքութեան աստիճան:

1962ին վեց ամիսով հետեւած է Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի (ԵՀԽ) Պոսէի (Ձուիցերիա) Միջ-եկեղեցական Ուսմանց Կեդրոնի բարձրագոյն ուսման դասընթացներուն: 1970ին մագիստրոսի աստիճանով վկայուած է Փրինսթընի Համալսարանի Աստուածաբանութեան Ճիւղէն, խորանարով եկեղեցական պատմութեան եւ ծիսագիտութեան մէջ եւ պաշտպանելով Ներսէս Լամբրոնացիի «Հռմկլայի Ճառք» միթը:

1964-70՝ եղած է Ամբիլիաս եւ Հալէպ. պաշտօնավարած է Հալէպի Զարեմ Եփփէ Վարժարանը իբրեւ ուսուցիչ, եղած է Դպրեվանքի տեսուչ եւ անոր կից՝ Ազգային Մարտիկեան Վարժարանի տնօրէն, Կաթողիկոսարանի Հասկ պաշտօնաբերքի խմբագիր:



Վարած է առաջնորդական պաշտօններ. եղած է թեմակալ առաջնորդը Սպահանի թեմին՝ 1974-ին 1977, Ամերիկայի Հայոց Արեւելեան եւ Քանադայի ամերիկասական թեմին՝ 1978-ին 1998: Ս. Նահանգներու մէջ իր առաջնորդական տարիներուն, ան ծաւալած է մշակութային-հրատարակչական լայն գործունեութիւն. 1978 Մայիսին հրատարակել սկսած է *Outreach* ամսաթերթը: Իր օրով հիմնուած են Մոնթրէալի Ս. Յակոբ, Թորոնթոյի Ս. Աստուածածին, Վանքովբրի Ս. Գրիգոր, եւ Քեմպրիճի Ս. Նշան վարժարանները:

1962-ին ի վեր գործօն մասնակցութիւն բերած է Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդին (ԵՀԽ) գործունեութեանց: Մասնակցած է միջազգային կրօնական գիտաժողովներու եւ ներկայացուցած Հայոց Եկեղեցին, ինչպէս՝ ԵՀԽի 6րդ եւ 7րդ Ընդհանուր Ժողովներուն: 1991-95 եղած է ԵՀԽի «Հաստը եւ Կարգ» յանձնախումբի անդամ: Իբրեւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան ներկայացուցիչ մեկնած է Ս. Էջմիածին 1979-ին, 1986-ին եւ 1987-ին:

1998-ին հրաժեշտ տալով Ամերիկահայոց Արեւելեան թեմին, Մեսրոպ սրբազան անցաւ Հայաստան, կարծելով թէ՝ «վերջակէտ էի դրած կեանքի մը եւ ալ մեռութեան մէջ պիտի անցնէի կեանքիս մնացած օրերը»: Սակայն «Հայաստան մոր շունչ, մոր աշխուժութիւն, մոր եռանդ տուաւ ինձի, եւ ես, աւելի քան երբեք, բոլոր, խանդավառ, նախաձեռնութիւններով լեցուն կեանք մը ունեցայ, որ տարածուեցաւ հոգեւոր, մշակութային, բարեգործական, ուխտատրական ճակատներու վրայ»:

Ան՝ «Ուխտատուրը Հայաստանին», հաստատուեցաւ Մուղնի, որ «սրբազանի՝ տարիների քրտնաջան աշխատանքով կեանք ստացաւ վերաշինուած եկեղեցով, ակումբով, մանկական երգչախմբով, շատերի համար իրօք ուխտատուն դարձած այգիով»: Սակայն, սրբազանը չսահմանափակուեցաւ Մուղնիով:

Հայաստանի մէջ իր ոչ-երկար կեցութեան շրջանին սփոփանքի ոչ միայն խօսքեր գտաւ, իր եռանդով վարակեց շուրջը, այլեւ միջոցներ հայթայթեց, կարողացաւ հոգեմշակութային վերազարթումի ծիլեր ցանել, եկեղեցիներու նորոգումը կազմակերպեց, կատարեց հաւաքական մկրտութիւններ՝ Ջուախքի եւ Արցախի մէջ, կազմակերպեց եկեղեցիներու մաքրման աշխատանքը, որուն մասնակցեցան 12000 դպրոցականներ եւ ուսանողներ, մասնակցեցաւ որբախնամ «Այգաբաց» եւ «Մեծն Ներսէս» բարեգործական միութեանց աշխատանքներուն, ձեռնարկեց «Մուղնի» հրատարակչական գործին հրատարակելով աւելի քան 220 հատոր գիրք, նախաձեռնեց բազմաթիւ բանասիրական-ազգագրական գիտաժողովներ՝ նուիրուած Հայոց Եկեղեցիին եւ պատմութեան, իր աւանդը բերաւ Հայաստանի Ազգային Ակադեմիայի վերելքի գործին: Իր ջանքերով տպագրուեցաւ ակադեմական շուրջ 25 գիրք: Սրբազանը առաջիններէն է որ արժանացաւ Ակադեմիայի Պատուատուր Դոկտորի կոչման:

Եղաւ վարիչ-քարտուղարը Հայաստանի Մէջ Քրիստոնէութեան Պետական Կրօնք Հոչակման 1700ամեակի Յանձնախումբին: Ան նախագահն էր Հայկական Պատմական Յուշարձաններու Ֆոնտին (Ժընն), անդամ էր Հա-

յաստանի Բնապահոց Միութեան, մախագահին էր Արամ Մանուկեան Հիմնադրամին (Երեւան) եւ հիմնադիրը՝ Երկիր եւ Մշակույթ կազմակերպութեան Ամերիկայի բաժնին:

Մերոպ սրբազանի գործերէն են՝ *Ընտիր Քարոզներ. Հաւաքածոյ* (1955), *Կարգացոյց. Ըստ Աւանդութեանց Հայաստանեաց Եկեղեցւոյ* (1975) ժողովածուները, «Նոր-Ջուղայի Հայոց Սուրբ Ամենափրկիչ վանքի մայր տաճարին, վանքի շրջափակին, կրօնական նկարչութեան, զարդարութեան գեղեցկահիւս իրերուն, մանր արտեստներուն նուիրած հետաքրքրական մտւոյներ, վաւերագրական փաստաթղթեր» պարունակող *Պատկերագիրք Սուրբ Ամենափրկիչ Վանաց Նոր Ջուղա* (1975) եռալեզու (հայերէն, անգլերէն, պարսկերէն) հատորը, *Սուրբերը եւ Մենք. Հայ Եկեղեցւոյ Սուրբերը եւ Ապրիլեան Նահատակաց Սրբադասման Հարցը* (1993), *Դիւան Մերոպ Դ. Թաղիադեան. Երկեր եւ Քերթուածներ. Վաւերագրեր, Նամակներ* (1993) երկերը, կրօնական խորհրդածութիւններու, տօնական օյերու մտածումներու, Հայ Եկեղեցւոյ պատմութենէն փրցուած էջերու ժողովածու ներկայացնող՝ «երեսուն տարուան եկեղեցական կեանքին, եւ յատկապէս մեր շուրջ քսան տարուան առաջնորդութեան գործունէութեան...խօսքերու եւ մտածումներու հաւաքածոն»՝ *Կեանքի եւ Հաւատքի Էջերը* (1993), եւ անոր «ուղիղ շարունակութիւն» հանդիսացող *Հանդիպումներ* (1993) հատորը, ինչպէս եւ՝ *Յետադարձ Հայեացք* (1998), *Լուսաւորիչի Լոյսի Նշխարները* (2000), *Հայ Ռիստատրութեան Վերջին Կայսանը* (2001) գիրքերը, ուխտաւորական ապրումներ ու պահեր ամփոփող հատորը՝ *Պահն Ու Յաւերժութիւնը* (2002), *Էջեր Հայ Եկեղեցւոյ Պատմութենէն* (1994), եւ՝ Ս. Էջմիածնի հիմնադրութեան 1700 ամեակին նուիրած *The Etchmiadzin Chronicles: Etchmiadzin as Seen by Foreign Travelers* հատորը:

Ամհանգիստ հոգիի տէր անձ Մերոպ Սրբազան Աշնեանի կեանքի Անթիլիաս-Ջուղա-Նիւ Եորք-Էջմիածին երթը կանգ առաւ 2 Դեկտեմբեր 2003ին, Նիւ Եորքի մէջ, սրտի կաթուածի հետեւանքով:

ԱՆԴՐԱՆԻԿ ՏԱԳԵՍԵԱՆ